Անհրաժեշտ հարկը զրուցեցի. վասն զի թէ ի Կամենից և թէ Նախիջեւան անցողարար և քիչ ժամանակ մնացեր եմ, մինչդեռ ի Թէոդոսիա երկար միջոց բնակելով, և աչքի առաջ ունենալով ազգիս հին և նոր յիշատակաց արժանի չինութիւնք՝ որք այս կողմերս, քաղքին մէջ և դուրսը, ամէն քայլափոխի՝ հետաքննին աչաց առջև կ'ելնեն, ինչպէս հնաչէն և հոյակապ եկեղեցիք, ամրակուռ մատրունք, քաղցրահամ ջրոց աղբիւրք, քարակոփ խաչք և խաչքարինք հայ վերտառութեամբ . . . : Բաց յայսցանէ հմտալից հետազօտութիւնք բանիբուն մարդկանց զԿազարաց աշխարհէ և առհասարակ զՏաւրիոյ, յորս աղգիս գաղթականութեան մասին, նորանոր տեսութիւնք յերևան կ'ելնան. ի վաղուց ինձ գրգիռ կը լինէին՝ գրել և հաղորդել հեռաւոր ազգայնոց, ի Ժ. դարէ և այսր Տաւրիացի Հայ գաղթականաց տըխուր և այլ երբեմն մխիթարական պատմութիւնը, մասնանիշ անելով նոցա յիշատակաց արժանի գործունէութիւնքը և աշխարհաչէն բարքը, որք յարակից են քաղաքիս անցելոյն հետ: Այլ որովհետև Թէոդոսիոյ ապագայն երերուն դրութեան մէջ էր և նորա հզօր հարեւանը և նախանձորդ Սևաստոպոլ՝ ամենայն միջոց ի գործ կը դնէր, զԹէոդոսիա նկուն դրից մէջ պահելով իւր վիճակը որ ըստ օրէ փառաւորելու, ահա այդ դրութիւնը քաղաքիս՝ ինձ արգելք կը լինէր հրատարակելու քաղաքիս և ազգիս մասին հաւաքած տեղեկութիւնքս:

Այդ երերուն դրութիւն, անուշտ իւր վախճանը մօտեցած տեսնալով անցեալ տարի (1890) գնալով զայրացաւ. դրեթէ համարէն Ռուսաստան այդ խընդրով պարապեցան. ոչ թէ միայն Ղրիմեցի լրագիրք